ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, Ապրիլ 30 -ին. Թիֆլիս. № 18

ՌՈՒՍ-ՉԻՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՆ

Лит. С. Быхова

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1911 Թ.

XI ՏԱՐԻ

ԽԱԹԱԲԱԼԱ

XI ՏԱՐԻ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և՝ անյայտ, ախտանի և անախտանի փրկիչ և գփիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կործիչների և խայտառակիչների։

Լոյս է տեսնում ամեն շաբաթ անխափան

Անհրաժեշտ Թերթ է բոլոր ընտրաբիքների համար։ «ԽԱԹԱԲԱԼԱՆ» շատերին ծիծաղեցնում և լացացնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերդ ուզի։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Տարեկան . . .	5 ր.
Կէս տարին . . .	3 »
Երեք ամիսը . . .	1 » 50 կ.
Ամիսը.	— 50 »
Թիֆլիսում տարեկ.	4 » —

«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ր.

Տարեկան . . .	12 ր.	Երեք ամիսը. .	3 » 50 կ.
Կէս տարին. . .	6 »	Մէկ ամիսը .	1 » 20 »

100 տարով բաժանորդագրուողներին 75% զեղչ։

Ջրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր։

Հասցէն՝ Тифлисъ Редакція „ХАТАБАЛА".

Արտասահմանից՝ Tiflis Gaucas edastion «Khatabala»

Խմբագիր-Հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ.

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՅՑ

1911 ԱՊՐԻԼ 30 օր

30

Суббота ՇԱԲԱԹ შაბათი

Լուսնի 16

1 (կիր.) Պարտ է այսօր, եթէ անձրև լցէ, բանալ զքաշալ գլուխս և մինչև իմ զկարգադրութիւնն կանգնել ի տակ մայիսեան անձրևու, քանզի որպէս Եփրեմ-վերդին գուշակէ նպաստաւոր է դայդ մազեր բուսնելու համար։

2 (բշ.) Ցիշատակ մեռելոց սրբոյն Զաքարի, որ չէյն չընտրուելու ջգրու, որոշեաց գնալ Զինաստան, վասն ինժիներ դառնալոյ։

3 (գ. շ.) Հիմնարկութիւն կաբինէտի գալաւային Թիֆլիսու, ուր կարեն մտնել միմիայն պապղուն կոճակաւորք, սիրասուն տիկնայք և բըբլաւոր օրիորդք, իսկ մուտքն հասարակ մահկանացուաց խստիւ արգելեալ է։

4 (դ. շ.) Տօն սրբոյն Վրդանէսի, Արիստակէսի և որդւոյն նոցա Աթանասի, որ նահատակեցաւ ի մէջ գիւղատնտեսական դպրոցին Քարվանսարու։

5 (եշ.) Ցիշատակ կանանց այնպիսեաց, որք ի սէր գաղափարի և հանրութեան հագեալ զնորամոդս շալվարն, գանակոծ եղան ի ձեռամբ ազէտ ամբոխաց։

6 (ուրբ.) Այսօր ուրբաթ է՝ պաս է, հեռու ի Թանասպասէ, վիթխարի շլեապայէ, նեղլիկ դէյրայէ, կանանց շալվարէ և ամենայն խաբեբայութիւնէ նոցա։

Աստղագէտ—տոմարագէտ և օրացոյցագէտ

Փարեմուզ

Ա. Յ. ՄԱՆԹԱՇԵԱՆ

ՊԱ՛-ՊԱ՛-ՊԱ՛-ՊԱ՛

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

I

Հրամայում ենք...

Էն բոլոր հայերին, որոնք փող ունեն եւ ուտել չգիտեն, թող փողերը բերեն մէջտեղը եւ ազգային գործիչներին՝ ի թիւս որոնց են՝ երեցփոխանք, հոգաբարձուք, խմբագիրք, վարդապետք, քահանայք եւ այլ զահրումարք—հրաւիրեն եւ այդ փողերի գործադրութեան համար խորհրդածութիւն անեն...

II

Բազմաշխատ եւ գեղեցկատեսիլ Նիկօլայ Կանճկաճեանին

Սիրեցեալ մեր

Էն գրած կտակը, որ կարդացել ես ու բեղամաղ ես եղել, այդ լաւ բան չէ. Աստւած համբերութիւն տայ, սազրամ, էլի դուն պտես համբերէ, խոստանամ՝ եթէ հինգ հարիւր միլիօն ունենալոց եմ երբեւիցէ, զերկու հարիւր ռուբլի բախշել ազգիս հայոց կարիքներին. դուն քէֆդ քոք պահէ, եւ դարդ մի անէ:

III

Պատւարժան խմբագրաց «Մշակ» ազգ. «օօօգուտ» հայատառ թերթի

Ջերմեռանդ ծառայութիւն Ձերոց ամենեցունց, վասն ազգիս հայոց եւ քրտնաջան աշխատութիւնք Ձեր ի պէս պէս գործս, դրդեալ են ինձ՝ արժանացնել Ձեզ պատւի եւ մեծարանքի. շնորհիմք Ձեզ ամենեցունց շողակնազարդ շքանշանն՝ «դալբի՛դուլաբի» առաջին աստիճանի—իրա տեմլակ մեմլակներով:

IV

Մեծարգոյ Մակարայ Ջմշկեան

Օրացուցէ Ձեր տեհնում ենք, վուր դուն էս տարի չիս ուզում, վուր ամառ ըլի. էս թաւուր բանը միզ դուր չի գալիս. վասնորոյ եւ հրամայում ինք՝ քուչէքումը մի քիչ կրակ վառել տալ, կամ արեւը փոքր ինչ մօտեցնել մեր երկրին, որպէսզի եւ կարելի լինի տաքանալ եւ իր ժամանակին էլ մրգերը հասցնել:

—

V

զՊարոն Մկրտչի Նաւասարդեան

Եւ քանզի դուն լաւ մարդ ես, սակայն Շիրվանզադէին չես սիրում—ուստի խնդրում ենք խասիաթդ փոխես եւ այսուհետեւ ոչ ոքի հետ էլ խռով չլինես:

Տալիս ենք ձեզ մի մինձ մեդալ իրա տրուպկով:

VI

Թեմական տեսչին Զանգեզուրի՝ Տէր-Մինասեանի

Վասն դոչաղութեանն քո շնորհիմք պստիկ տեսակի «նալս» ի պէտս ոտից քոց:

VII

Բարեկարգչին Թիֆլիսի տէր Ղեւոնդ սեւերես քահանայի Մամիկոնեան
(ոչ սերնդէ Վարդանայ)

Նշանակեմք զքեզ զնաչալնիկ «մուշտ ու կռւի»: Պատւէր տամք պարոն ոստիկանապետաց՝ ի հարկաւոր դէպս օգտւել «զղւաթիցդ»:

VIII

Տէր Կոստոյի Արարատեան

Յաւուրս Զատկի ի ժամու եւ ի վանքս սրբոյն Սարգսի՝ դուն զախարս-մատաղս զախար-մախար արեալ ես. եւ առիթ տւեալ բողոքաց. արդ՝ պատւիրեմք եւ զշտրամ նշանակիմք ի վերայ քո՝

Սարքել մի ճաշ ի մէջ Օրթաճալոյ և հրաւիրել անդ դպրոցի հոգաբարձուներին ուսուցչական խմբի:

IX

Շնորհիմք զմէդալ «Խուրմայի» առաջի աստիճանի՝ գիւղատնտեսաց հայոց՝ մեծագործաց Ալէքսանդրի Քալանթար, Աշոտի Աթանասեան եւ Շահբազի:

X

զՄեդալ «Խուրմի» 2-րդ աստիճանի, կորիզներով լիքը՝ Մելիք-Բախտամովլեանց Եաղուբի, Սահակեանց Սահակի, Աբովեանց Սարգսի և այլոց խուրդա-մուրդայից:

Իրա սակուլթար աչ ձեռքով գրեց ու մէնդալներն էլ բախշեց, շնուխքերը տւեց

Բարեցակամ՝

Գասպար աղա Կալատուզով

Աթոռանիստ ու թաղթերով զուգւած քաղաքն մեր՝
Թիֆլիզ
30-ն ապրիլի 1911 թւի.
և մեր խաթաբալութեան վեցերորդ տարին

ՄԱՆԹԱՇՈՎ ԸԼԻՔՍԱՆԴՐԻ ՀՈՔԻՆ՝ ԱՍՏՈՒԾ ԼՈՒՍԱՒՈՐԻ

Էնդդամ աչքներդ դէս ու դէն տարանք, էնդդամ խօսեցինք, վուր էս օր՝ Մանթաշովին էլ հուղը դրեցիք:

Ի՞ս գիդիմ. դուք մէ օր իմ գլխին էլ էդ թաւուր օյին իք գալու. համա ջէր փիքր արէք, էգէբա եանղըշ գաք:

Հիմի ով վուր ապրում է՝ իր համա խօմ չէ ապրում, իլաքի նա, ով վուր փող՝ միլիօններ ունէ. նա՝ էդ թաւուր մարթը, պտի խալխի համա ապրի, խալխի կամքով նստի, խմի, ուտի, քնի:

Վա՜յ է էկի նրան, ով էտինց չի ժաժ էկի:

Ի՞ս գիդիմ, վուր մեռնիմ էնչախնէթ էն էք ասելու թէ՝ Գասպար Կալատուզովը ի՞նչ է թողի, ու ո՞ւմ ի՞նչ է շընուխքի, միլիօներիմէն ո՞ւմը ի՞նչ է բաժնի. իս գիդիմ, վուր մեռնելուս շատերդ քթերը կու կախիք, շատերդ էլ պռոշները կու կրծիք—համա էդունք չի օտկի—չունքի իս իմ անդերձը (կտակը) էնինց դայիմ իմ գրի ու փեշտի, վուր օխտը դուժին աբլականիր ու դուշէպրեկաշչիկներ էլ չալիշ գան՝ վուչինչ չին կանայ անի:

Իս իմ կամքի տէրն իմ:

Լուսահոքի Ալէքսանդրէ Մանթաշովն էլ խատակ ու էդթաւուր լաւ խասիաթ ունէր:

Մարթը տալիս էր, իփ վուր ուզում էր ու ո՞ւմ՝ վուր ուզում էր:

Էստի ինչ կայ բեդամաղ ըլելու: Օքմին վուր մէ բան ունէ, ու ամենքը ուզին էդ բանիցը, կանմա՞յ դիփունին տայ, թաւաղա անի՞:

Ասում ին՝ վուր կանայ, կօսէ:

Իս փիքր իմ անում ու ասում իմ, վուր չէ, չի կանայ:

Աշխրքիս վրայ բանիր կայ, վուր մարթս ինչ էլ ուզի անի,—չի կանայ ամենքի սիրտը շահի:

Մէկը փող ունէ:

Մէկէլը խիլք:

Էն մինը սիրնութին:

Վրայ չուրրորթը տալանտ:

Հինգերուրթը ձէն:

Վեցերորդը մէ ուրիշ բան. ու էսէնց թայիր թայիր բանիր:

Դուք տեհիլ իք, վուր մէկը՝ խիլունքը, իրա խիլքը մէ գլուխ ու ամենքին բաժնէ—իժում էլ գլխումը ի՞նչ կու

ՍԻՐԵԼԻ ԿՆՈՋ ՆՆՋԱՐԱՆՈՒՄ

—Ա... սիրելիս, դու էլ վարակւեցար վերջին մօդայով, տեսնում եմ արդէն՝ շալւար ես կարել տալ քեզ համար, ոչինչ, հետաքրքիր է։

ᲔᲠᲝᲕᲜᲣᲚᲘ ᲑᲘᲑᲚᲘᲝᲗᲔᲙᲐ

ՄԵՆՈՒ. Էդ իս գորոդակոյ կասի հանգի կու դադարկի։

Մինը՝ վուր սիրնութին ունէ, ու նրա աղաք ամեն մէ կաւալէր-սուխարնիկները առուտեհանից մինչկի իրիդուն դռանը կաղնին, ասին՝ «մինք քիզ սիրում ինք». ինչ էք փիքր անում, սիրուն կնիկը ամենքի հիդ էլ վուր պըրոշտի անի՝ էլ սիրունութինը կու ՄԵՆՈՒ։

Մէկը, խօսքի գելիշ տալանտ է. ասինք, լաւ խաղցող է թրիատրում ու խալին էլ խիստ հաւնում է նրան, կուլի՞ ըլի, վուր քուչէքումն էլ իր խաղը շանց տայ։ Կօսին տուտուց է։

Մարթ կայ լաւ ձէն ունէ. մէ խաղի, երքի համար հարիր թումիր ին տալի, ինչ էք կարծում էդ լաւ ձէնով մարթը հայ «իրգիչների» թաւուր, վուր ամեն մի ղոնաղութինին, ժամ ու պատարաքին իրքի, էլ էտ ձէնը գին ու ածում կունենայ. չէ, իսկի էլ կոպէկ չի ածենայ, էդու համա էլ ասած է— ինչ է ասած. շատ բան է ասած ու ասածներիրց էն ուփրօ լաւն է, վուր Աստուձ հոքին լուսաւորէ միր Ալէքսանդրէ Մանթաշովի. փուղի համ դադրը գիդէր համ էլ ծախսելու ու տալու տիղիրը։

Շատիրը նեղացիլ ին թէ ինչու իրինք Մանթաշովի անդերձով վուչինչ չին ստանում։

Ողորմելի խալխ։

Քելեխ ուտող ժողովուրթ-հաուց, մինչկի՞ի՞ պտիս դուն ուրիշի ձեռքին, ուրիշի աշխատանքին, դադաձին մտիկ տաս։

Ու մտիկ ին տալի Մանթաշովինց դրան մինձ ու պստիկ, հարուստ աղքատ, սերթուկաւոր տիրացուն ու ինտելիգինտը, դոխտոր, աբլակատ, ինժիներներ, ունիվստատի ուչիտէլը։

—Վա՛, Մանթաշովը փուղիր է թողի, ու�է տուի է՛. ինչի ասկի համա դիփ չի տուի, վուրթիքը ինչ է, ինչ կօնին էտղդամ։

Ասում ին դիփունքն էլ, դիփունքն էլ մի թաւուր։

Ասում ին ինչ ին պակասցնում։

Որիշի սչոտումը ասկասիրութին ին անում։

Ասկի համա փիքր անում։

Համա մէ նմուտ էլ տեհնէնք թէ Մանթաշովը ասկի համա անդերձ անէր ու իր միլիոնները, վունց վուր իւ՝ էնինց խարջեր ու ինչեր կու խօսէինք։

Կօսէին՝—

—Ասկը ինչ կօնէ, շունը ու գելը դիփ պիտի ուտէ. ու վիրչն էլ գերեզմանից կու հանէին, էնդդամ ուշունցներ կուտային։

Հիմի միթոմ ուշունցնիր չին տալի բարերարներուն։

Մարթու, աթմորթու խասիաթը էտինց է։

Իր օրումը նա խիլունք բան չի ասիլ, չի անիլ։

Իս, վուր ջէր չունեցած միլիոններս ասկի համա անդերձ արի՝ ում հասկացաւ, ում ձեգմէն մէ բերան շնորհակալութիւն արաւ, ինչ է իմ փողը՝ փող չէր, իմ միլիոնները՝ միլիոններ չէին։

Իս, չունեցած տեղիցը, լէն սրտով ասկի համա դիմիշ արի էն՝ ինչ՝ վուր չունէի, ու թէկի ունենայի—աբա էդ էլ ինչ խօսք, վուր մէկը էրկուսով, իրիրով, հարիր հազարով կու աւելցնէի։

Համա բանի զօրութինը էտի չի։

Մանթաշովից ուզում ին օքտի էլի չաղիրը, տուզիրը-մուզիրը։

Էտինց է աշխարքը։

Գորոդակոյ ուպրաւէն՝ չլիններն ու գոլովէն, գլասնիքն էլ հիտը՝ խիստին բեդամաղ էլի, վուր Մանթաշովը մէ տաս միլիոն չէ տուէ իրինց բաժնելու համա։

Խիլքի աղքատներ։

Զունքի էնդուր էտինց ափրակ բաներ ին խօսում, փիքր անում։

Զին կ նացի՞ մէ տաս թումանանոց տիղ գթնի, դուլուղի վրալ կաղնի, գնացի՝ ին գորոգակոյ ին մտի, ու հիմի գուզին վուր Մանթաշովը իր միլիոնները իրինց տար բաժնելու, այսինքն՝ վունց վուր ասում ին ղրափառ՝ Մանթաշովի անումով իրանք լաւ մարթիք դառնային։

Ջիր փնտրածը՝ էստի չի ապրում, հիմի էդ թաւուրներ չկան։

Մանթաշովը, թէկի, կանաց վուր եօխտանասուն ու հարիր միլիոններ ձեռք բերի. բաս չէր կանայ բաժնի։

Աբա էդ իմ ասում է։

Ա՛խ խիլք, ուր իս ուր։

Ամենքին դուք մէ արշինով էք չափում։

Մանթաշով Աղէքսանդրի հորին Աստուձ լուսաւորէ։

Էրկու շաբաթ է խալխը մէ գլուխ նրա վրէն է խօսում. նրա միլիոնների անումիցը մատնիրը լպստում, քաղցը երաղներ տեհնում։

Երաղներ ին տեհնում.
Մինձ ու պստիկ,
Տղայ աղջիկ
Հարուստ աղքատ...

Դասպար Կտլատուզով

ԲԱՑՆԱՄԱԿ

Մեր քեմական առաջնորդներին եւ կաթոնիկէ կոնսիստորիայի անդամներին

Պարոն Փիլիպոս Միլիպոսեանը, ինչպէս երեւում է մեր ազգային վկայականից ամուսնացել է օրիորդ Հեղինէ Մեղինեանի հետ և կենակցել է սրա հետ շուրջ երկու տարի և երեք ամիս, ունենալով այդ կենակցութիւնից երկու զաւակ՝ Հայկ և Սիրան։

Ամուսիններից պ. Փիլիպոս Միլիպոսեանը թէև կնոջը շատ էր սիրում, բայց ընկնելով մի փորձանքի մէջ՝ դաւաճանեց կնոջը, իսկ կինն էլ իր հերթին նկատելով ամուսնու արարքը՝ սիրահարւեց իրենց տան բարեկամներից մինի հետ և նրա հետ փախչելով՝ ապրել է բարեկամի հետ շուրջ երկու տարի։

Ամուսին պ. Փիլիպոսը կնոջ անհաւատարմութիւնը ի նկատի առնելով և տեղնուտեղը բռնելով յանցագործութեան մէջ, թէև կինը դրժում և հաւատացնում էր, որ ծանօթի հետ ապրում էր որպէս տան բարեկամի հետ—դիմեց մեր կոնսիստորիաներից մինին ապահարզանի հարց դարթեցնելով։

Կոնսիստորիան յարգելով ամուսինների անել դրութիւնը՝ միջնորդեց սինոդին և սինոդն էլ ամուսիններ Փիլիպոս և Հեղինէ Միլիպոսեանների պակը լուծած համարեց, տալով երկուսին էլ ապահարզան և նորից ամուսնութեան մէջ մտնելու իրաւունք։

Այժմս, մի քանի տարի անցնելուց յետոյ՝ թէ մէկը և թէ միւսը ուրիշներից բաւականութիւն ստանալուց յետոյ՝ մտածում են և իրենց երեխաների վերաբերեալ, ուստի և ուզում են նորից ամուսնական կապ հաստատել։

Եւ գեղեցիկ բան են անում։ Միայն մի հարց է ծագում, արդեօք սրանք իրաւունք ունեն նորից ամուսնանալ—ինչպէս ծխատէր քահանաները դիմում են կոնսիստորին. արդեօք այստեղ մի եկեղեցական իրաւաբանական հարց չկայ. չհասի հարց։

Մարդ և կին նորից ուզում են ամուսնանալ, և մեզ թւում է, որ այստեղ խնամիական առաջին աստիճանն է խանգարում և ազգակցական կապերը նորոգում. բան զօրութեան կանոնների չի կարելի այդպէս մերձաւոր բարեկամների պակը օրհնել։

Որովհետև տիկ. Հեղինէ Մեղինեանը պ. Փիլիպոս Միլիպոսեանի զաւակների մայրն է եղած—իսկ Փիլիպոս Միլիպոսեանն էլ իր հերթին տիկ. Հեղինէ Մեղինեանի զաւակների հայրը։

Արդ՝ այսպիսի մի չհաս պակ կարելի է կատարել և եթէ այո, որ օրէնքներով։

Պսակողների բարեկամ

ԾԻԾԱՂՈՒՄ ԵՄ

Ծիծաղում եմ,
Բայց խնդութեան երգ չեմ երգում ձեր խլացած ականջում,
Թունաւորւած ծիծաղն իմ ծոյլ, կոծ ու կսկիծ է հնչում...
Ծիծաղում ե՛մ, ծիծաղում՜.

Ծիծաղում ե՛մ, երբ տիրանց լւացւում է արիւնով,
Ապուշ հոգու իր քրքիջով, կամ դիւային համբոյրով,
Երբ պաշտելի ըմբոստների—ճչող հոգին զայրացած
Բարէ անլուր շէնքերի մէջ մարում, կորչում է անդարձ։

Ծիծաղում եմ—երբ Կրէսը հայ,—Փարիզ, Բերլին է անցնում
Ու նախ շւայտ ու անառակ կանանց վայրն է հարցնում,
Քանի մի տացով կոկոտներին ապահովում սիրալի,
Բայց իր ազգի դռներ բաղխող ուսանողից—խոյս տալի։

Ծիծաղում ե՛մ—երբ շուկայում կոնծած երեցն է պարում,
Եւ պաշտօնն իր աղօթատան սուսկ խորշերումն է վարում,
Երբ կեղեքում է ընկածին, միշտ պաղարիւն ու չկամ..
Ու հրէշացած նշաւակում լանջախաչը իր անգամ։

Ծիծաղում ե՛մ—երբ ջենտլըմեն ոսկի մսխող հայորդին,
Կախարդ Ժիւբսով շրջապատւած, էլ չի նայում իր չորս դին,
Իր խեղկատակ Ֆրինայի հետ—ծաղրում է հայ գիրն ու ճիգ...
Իսկ լուռ մեռնող գործիչն անտուն. չունի նեցուկ-զօրավիգ։

Ծիծաղում եմ—երբ մէկը՝ խենթ վայելքներից է յոգնում,
Միւսը՝ նօթի, չար ու ցաւի սև պատուհասն է երգում,
Մէկի համար—կեանքն՝ օրօրոց, միւսի համար՝ գերեզման,
Մէկն՝ ապրում է, միւսը՝ շնչում, բայց ծիծաղում ինձ նման։

Ծիծաղում ե՛մ—երբ հեգնում են իմ ծիծաղն ու գաղտնի լաց,
Ու կամ հպարտ եմ մէնութեան խոկերն անչափ ու անանց,
Զուրէ. ոչ ոք վերածնութեան մի հիւլէ յոյս ինձ չի տայ՝
Է՜հ Venitas venitatum et omnia venitas!..

Մարիկ

Գ Ի Շ Ե Ր

(Հունգարական կեանքից)

—

Կէս գիշեր է։ Կաֆէն դեռ բաց է։ Ոչ ոք չկայ։ Միայն այնտեղ, պատուհանի մօտ նըշմարւում է մէկի կերպարանքը, այն էլ լրագրի մէջ խորասուզւած... Բուֆետի ետեն երկու օրիորդներ՝ սպիտակահեր, յոգնած աչքերով, Թէյի Թասերի մէջ շաքար են գըցում։ Ամեն մէկում երկ-երկու կտոր... պը՛նգ, պը՛նգ... Կաֆէյի այս խեղդուկ մըթնոլորտում մնալը շատ ծանր է, տաժանելի կերպով տխուր ու սիրտ մաշող... Աղջկերքն օր ու գիշեր յետ ու առաջ քայլելով, դէս ու դէն ընկնելով՝ ժռռացել են գիշերային հանգիստը... պը՛նգ, պը՛նգ... Թշւառ արարածներ։

Բաւականին ուշ է։ Սիւնի ետեւից յայտնըւում է սպասաւորն ու սկսում դախլի մարմարեայ սեղանի Թոզը սրբել։ Այս մեքենայական շարժումները նրան հնարաւորութիւն են տալիս սթափւելու և ծանրացած կոպերից քունը փախցնելու։ Նա շատ է յոգնել։ Բուֆէտին Թիկնած ու գլուխը քաշ գցած՝ նա, երեւի, մտածում է, որ Թէև Բերլինումն էլ կան կաֆէներ, բայց այնտեղ մարդիկ այնպէս չեն բեզարում, ինչպէս այստեղ։

Ես նստած եմ ու նրան եմ նայում, բայց օգնել չեմ կարող։ Դուրսը սաստիկ անձրև է, ես էլ, վերարկուիս նոր մախմուրէ վըզնոցի պատճառով՝ մնացել եմ կաֆէում։ Աչքի եմ անցնում լրագիրը և յանկարծ լըսում եմ,—անկիւնում, արտաքնոցի կողմը, —աղմուկ ու ձայներ... Ի՞նչ բան է. Ականջ եմ կախում. գդալը կամացուկ պնակի վրայ

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷՄԱՆՍԻՊԱՑԻԱՆ

—

Ո՞վ չգիտէ թէ ներկայումս ինչեր են անում կանայք և թէ ի՜նչ լուրեր են բերում մեզ եւրոպական թերթերը—կանանց շարժման մասին։ Անցեալ մարտի 19-ին, միևնոյն օրն և եթ Գերմանիայում, Աւստրիայում, Դանիայում և Շվեյցարիայում կանանց քաղաքական իրաւահաւասարութեան հսկայական ցոյցեր են տեղի ունեցել։ Միլլիոնաւոր կանայք դրօշակներով, երաժշտութեամբ, երկար ու բարակ ճառերով, փողոցներում խռնւած են եղել իրանց սովորական ճըվճվոցով։ Առանձին շուքով են կազմակերպւել ցոյցերը Կօպէնհագէնում—ուր կանայք օրւան հասունացած խնդիրը շօշափելով իրանց ճառերում, անիծել են ի մէջի այլոց և ինձ, իբրև կանանց էմանսիպացիայի խիստ հակառակորդ մի կտրած գդալի։

Չէ, դէ ես միզանտրօպ չեմ ու առանձին ոչինչ չեմ ասում, կինն էլ մարդ է, իսկ մարդը՝ ինչպէս ասում էր բռնօթի քաշողների նահապետ՝ Արիստոտելը, քաղաքական անասուն է։ Սակայն ի՞նչ անուն տալ այդ անգլուհի ըմբոստ ու հրապարակները աղմկող սուֆֆրաժներին, որոնք կատաղութեամբ առաջ մղելով իրանց պահանջները, անգամ պարլամենտի նիստերն են խանգարում և բռունցքներով ու հովանոցներով ընդդիմանում ոստիկանութեանը, նորից ու նորից ընտրողական իրաւունք պահանջելով քաղաքական պայքարում։

Եւ ի՞նչ էք կարծում, նրանք մասամբ հասել են իրանց նպատակին—ներկայումս Նօրվեգիայում կանայք արդէն օգտւում են քաղաքական իրաւունքներով, Ֆինլանդիայի պարլամենտում կան արդէն կին-պատգամաւորներ, Լօռում կան՝ կին-միկիտաններ, անգլիական մի քանի արդիւնաբերական քաղաքներում, կանայք վարում են մէրի (քաղաքագլուխ) պաշտօն, ինչպէս արբեցութեան դէմ կատաղի կռիւ մղող յայտնի տիկին Լիսը—Օյլդխէմում. բայց դէ՝ ի հարկէ, Լիսն էլ գլուխ ունի, հօ մեր Կեկել-վարժուհիների նման (որոնցից մի քանիսը եկել էին Սանահին ամսոյս 14-ին, ներկայ լինելու շրջանի ուսուցչական միութեան ժողովին) անտեղեակ չէ իր կատարելիք գործին։ Լիսը, երեւի օրական մի бубликъ է ուտում ու մի գաւաթ կակաօ խմում և շարունակ մտածում Օյլդխէմի յառաջադիմութեան մասին, իսկ վերոյիշեալ մի քանի զոյգ վարժուհիները, որոնք հայ խօսքի ուսուցչուհիներ լինելով հանդերձ, կարգին հայերէն չգիտէին, ամբողջ օրը ուտումխմում էին վանքի հաշւին, սեթևեթում վանահայր վարդապետի հետ (սա այն բարի պտուղն է...) նիստի ժամանակ ննջում... և ճշմարիտն եմ ասում, միանգամայն չգիտէին թէ ո՞ւր և ի՞նչու համար էին եկել Սանահին։

Սակայն Թողնենք այդ նազելի հաւերին։

—Ես Ժիւլ Սիմօնին ամենևին չեմ տեսել և չեմ էլ ճանաչում, բայց ասում են թէ նա խիստ տանջւած լինելով օձ կանանցից, մինչ ուժաթափութեան ամենավերջին հառաչանքը, ընդդէմ կանացնեց նրանց պահանջներին, պնդելով թէ—«կինը՝ պիտի կին մնայ»։

Վիլհէլմ կայսրը, թէև չի կարող տանջւած լինել օձ կանանցից, (նա ուրիշ տեսակի տանձ է) բայց պնդում է թէ՝ կինը պիտի ընդունէ միայն չորս «k» և ուրիշ ոչինչ kaiser (կայսր) küche (խոհանոց) kirche (եկեղեցի) և kinder (երեխաներ)։

գնում… Թողնում եմ թէյը…

—Ա՜մմմ։ Օ՜ճճ։

Դա բնութեան խսկ ձայնն է։ Երեխան է լալիս։ Ես ջերմագին փափագում եմ, որ երեխան դադարէ ոռնալուց, ուստի թեքւում եմ միւս կողմը և ուզում եմ ննջող սպասաւորին արթնացնել, այդ ժամանակ, մէկ էլ տեսար, յանկարծակի յայտնւում է մի բարձրահասակ կին, փոքրիկ՝ երեք տարեկան աղջկայ ձեռքից բռնած։

Այդ կինը տեսքով մի փոքր գունատ է, ականջներում բրիլեանտներ են վառւում։ Նա առաջ է գալիս շտապով, առանց դէս ու դէն նայելու…։ Փոքրիկ, սիրունատես աղջիկը, շօկօլադաշաղախ մատը բերանը դցած, սպիտակ ահագին գլխարկի շրջանակի տակից իր խոշոր աչքերով նայում է վրաս…

—Պմպա,—ասում է նա ու ծիծաղում։

Երկուսն էլ անցնում են մօտովս։ Ես չեմ ուզում վրդովել կնոջը և ինձ այնպէս եմ ձևացնում, որ իբր թէ բան չեմ լսել։

Մինչ այդ՝ կաֆէ մտաւ մի այլ յաճախորդ, տեսքով վաճառական կամ կալւածատէր, մազալլու, հետաքրքիր դաւառացի։ Նա հանեց գլխարկը. նայեց իր շուրջը, ապա նստեց ու երկար ինչ որ ասում էր սպասաւորին։

Կինն ու երեխան յետ վերադարձան։ Յաճախորդը, բերանը բաց, աչքը տնկեց այդ կնոջ վրայ։ Սիրտս ասում էր, թէ գնամ և մի լաւ թրխկացրնու։

Երեխան մատը նորից բերանը դրեց և իր խոշոր աչքերով խորամանկութեամբ նայում էր նոր յաճախորդի վրայ… Ահագին, սպիտակ գլխարկի շրջանակի տակից այդ աչքերը նայում էին ոչ մանկական հայեացքով…

—Պմպա,—արտասանեց նա, մօտիցն անցնելով։

Կինը ծիծաղեց, ու խորհրդաւոր հայեացք գցելով թէ ինձ ու թէ նրա վրայ՝ անցաւ։ Մենք նկատեցինք տակի՝ մետաքսեայ մանիշակագոյն շրջազգեստը և սիրուն, կարճ ճիտ նրբակօշիկները…

Դէպքն ինձ վրայ շատ ծանր տպաւորութիւն թողեց… կնոջ աչքերը կարմրատակել էին։ Անծանօթ պարոնն իր տեղումը հանգիստ մնալ չէր կարողանում, անմիջապէս շուռ եկաւ ու իր կարճ ու հաստ մատներով սկսեց սեղանը թմբկահարել։ Վերջապէս՝ վեր կացաւ, վրաս մի բարկացկոտ հայեացք գցեց ու գնաց մի անկիւն քաշւեց… Ես շուտով նկատեցի, որ նա ծիծաղում է ու գըլխով անում։ Սպասաւորը մօտեցաւ նրան ու փոքրիկ կապոցով շօկօլադ բերեց։ Փոքրիկ աղջիկը մօտ վազեց ու անծանօթ պարոնին ձեռք տւեց։ Նա էլ նրան շօկօլադ ընծայեց։ Թշւառ երեխան նորից իր պապային գտաւ։

Ապա նրանք երեքով միասին առաջ անցան գնացին… մի ընտանիք կազմելու։ Կաֆէն դատարկւեց։ Ոչ ոք չկայ։ Սպասաւորը քնած է սիւնի ետևը։ Իսկ բուֆետի ետևն երկու սպիտակահեր աղջկերքը, յոգնած աչքերով, թէյ են ածում ու թասերի մէջ շաքար գցում… Ամեն մեկում երկ-երկու կտոր… պը՛նգ, պը՛նգ, պը՛նգ։

Թարգմ. Գ. Բաքուեան

ԵՐԵՒԱՆԻ ՆՈՐԱԳՈՅՆ [illegible]
ՍՈՐՏ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԻՑ

I

Ախպէր՝ զարմանքի բան չէ՞,
Երևանցին՝ էրբ կամաչ է…
Թատրոն գալուց՝ կարդ ճանաչէ,
«Բռաւօ-բռաւօ» կամաց կանչէ։

Հախի սովրեն տոմսակ առնեն՝
Մուքթայ կուբօյի չըվազեն.
Ներկայացման շուտ ներս մտնեն
Խաղի ժամին… քուն չմտնեն…

II

Խմբմըրդմը, ա՛յ ժողովուրդ.
Տեսէք՝ թէ մի ո՞վ է գալիս,
Աէրօպլանը գլխին դրած՝
Շալւարով мадам-ն է գալիս։

Տուֆլիներով՝ կըտկտում է,
Մէջքը կիսէն՝ կոտրտում է…
Էս էլ․․ նորա… Շանտէկլըրա…
Մեռաւ, գնաց էն հին դէյրա…

III

Զարմանալու են մեր կանայք,
Հէչ չեն սիրում հանաք-մանաք
Լաւին, վատին որ չգովես,
Հանաքը՝ կըշինեն դագանակ։

Բիթը՝ բիզ է—ասիր դուզ է,
Դէմքը ճպոտ—թէ աղազ է,
Լեզուն լալ է—ասիր բալ է,
Ոտքը չոլախ—լաւ կըքալէ։

Կլլան Ցակովը

Ես, թէև ոչ Ժիւլ Սիմօն եմ և ոչ Վիլհէլմ, (թէև մայրս հաւատացնում է ինձ որ ես նրանցից էլ լաւ եմ—աշխարհի միակ լաւն եմ…) բայց վստահանում եմ աւելի ևս առաջ գնալ, հիմնւելով իմ դառն փորձառութեան վրայ. (խօսքը մեր մէջ մնայ, ես էլ դադւած եմ կանանցից)—կնոջը ոչ թէ հաւասարութիւն է պէտք, այլ մի լաւ մտրակ. մինչև անգամ աւելորդ չէր լինիլ պարսկուհու նման երեսն էլ պինդ ծածկել. հարկաւոր է փակել նրան տանը—ընտանեկան շաբլօն շրջանակի մէջ, կողքին դնել օրօրոցը և ձեռքը տալ աւէլը, ասեղն ու շերեփը. կարող է երբեմն գիրք էլ կարդալ, ոչ՛ինչ միայն ոչ րօմաններ կամ բանաստեղծութիւններ այլ՝ «Լուսաբեր» I տարի. երբեմն էլ կարելի է դրօժկով ման ածել, բայց ի հարկէ գիշերով. որ աչքեր չտեսնէ ու մտաւոր համեմատութիւնների խորը չգնայ, թէ չէ հիմա կին և կնոջ խելք գողանալու սովորութիւն կայ, որպիսի դէպքում—ընտանիքի սէրն ու սրբութիւնը պղծւում են ու թունաւորւում և ապա առաջ է գալիս pasbod կոչւող հիւանդութիւնը և կատարեալ անկումը։ Կինը՝ մի խենթ նժոյգ է, որին սիրելով հանդերձ, չպիտի սանձը ազատ թողնել. նրա մէջ թէև պարունակւում է կեանքի ամենահոյակապ հաճոյքը, սակայն միևնոյն ժամանակ նա է և բոլոր չարիքների արմատը։

Այն տեղերում—ուր մարդիկ աւելի փալաս են, ֆլեգմատիկ կամ շւայտ, կանայք հպատակեցնում են նրանց—իրանց շրջազգեստին։ Փաստերը ակներև են—Ֆրանսիայում և Լօռու մի քանի գիւղերում, կանայք արդէն սկսել են քաղաքավարի կերպով քեօթակ տալ իրանց այր-մարդկանց, մինչև իսկ անձաշ թողնել ու աւազի վրայ չոգացնել։ Ուզունլարցի գեղջկուհիներից շատերը ձգում են իրանց ամուսիններին և կողմնակի անձերից աւանս ստանալով՝ գնում են նրանց կնութեան։ Հոգևոր իշխանութիւնը այդպիսի երօպականացած ախմախ կանանց պսակը շատ յաճախ լուծելով, տալիս է վերստին ամուսնանալու իրաւունք, որովհետև նրանք կարողանում են գործը տանել, շնորհիւ իրանց կաչաղակութեան, ձկան արցունքների ու բնատուր փաստաբանական հանճարի, իսկ իրանց խեղճ ու կրակ Գիքեօրները, մնում են քննիչ քահանայի առաջ ծոծրակները քորելով.

Հետաքրքիր կըլինէր անշուշտ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի կարծիքը եւրոպականացման մասին, եթէ հիմա կենդանի լինէր նա, և տեսնէր, թէ ինչպէս կինը՝ ամուսնու փափախը գողանալով—սիրականին է բաշխում և…

Մի կին՝ որ խիստ ամօթխածութիւնից դունչը—մինչև քթի կէս մասը ծածկած ունէր փաթաթանով, մի գեղեցիկ օր անդարձ փախչում է իր Գիքեօրից մի ուրիշ մարդու մօտ։

Քննութեան ժամանակ, ճարպիկ կինը խոստովանւելով իր աններելի յանցանքը, յայտնում է թէ այդ արել է ակամայից—իր սիրելի Գիքեօրի խելագարութեան պատճառով։

Ապշած Գիքեօրը, այդ պոչաւոր ստից կատաղած, դիմում է իր շրջապատող համագիւղացիներին—

—Ասացէք, բարեկամնե՛ր, մի՞թէ ինձ նման խելքը գլխին մարդ կայ մեր գիւղում։

—Տեսնում էք, դառնում է կինը քննիչին, այժմ կարող էք հաւատալ իբրև խելագար, դա միշտ այդպիսի համարումն ունի իր մասին…

Գործը ձգձգւում է։ Վերջապէս Գիքեօրին ենթարկում են բժշկական զննութեան և ի

ЭРМИТАЖЪ

***

Իմ հոգին տենչագին. յուսագին,
Միշտ կայտառ, սիրահար, անդադար՝
Կարօտով, վառ սրտով, որպէս հով՝
Քեզ զալիս, երազիս սիրունիս...

Փընտրրում աշխարհում—չի գտնում,
Ու մենակ վշտի տակ անքանակ՝
Ամեն օր, մենաւոր, սգաւոր—
Անհատնում խաբերում նա լքւում...

Ա. Կոծին

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գասպար-Աղային, մեր թարեբէն Սիրով կաւօտով բարեւ եւ ամեն.

Գասպար ջան.

Մեր քաղքի ռուսաց վարժատան վարժապետները իրենց յաշկերտներուն հետ գնացիր էին յուրիշ քաղքներ զեղմիշ յըլլելու, սէյրան էնելու։ Շնորհակալ իմ, ինձի ալ հետները տարեր էին ռաստ էկած պղնձները զալայելու։ Ապրիլի 14-ին սարախտան կանուխ Բաթումին մէջը ժուռ զուգայինք կը։ Քաղաք, դա քաղաք, ոֆիրմ քաղաք, ոֆիրմ իշխանութեան։ Ոլիցները անպէս թամուզ, անպէս թամուզ, անպէս պլպլան կը, օր եղ լցնիս զայ չի էղնի։ Ալ ես ասոնց ինչը զալայիմ, իրանք զալայիր, յըստկիր, զրաղ են քաշուիր։ Գնացինք բուլվար։ Ոֆիրմ բուլվար։ Ադամի էվայի զըբախտը էսիկ է էղէր։ Հաղար չեշիտ ծաղիկներ. շէնքով շնորքով ծառեր։ Վէվ օր դրախտ չէ տեսիր, թող գայ տեսնի։ Աստեղ ալ թամուզ էր, աստեղ ալ զալայելու բան չկար։ Հալը սև ծովը։ Ես գիտ թէ, մեր Տառ բողազի գեօլից վենց գեօլ չկայ։ Մուխը մանի սև ծովի, ոչ ծէր ունի, ոչ գլոխ, քիչ մալ հերսոտ էր, տալդամիշ գլէր։ փըրփրէր կը. ֆշշալով գոռալով դէպի մեզի վազէր կը, վախեցնէր կը։ Գնացինք գեամիների մէջը մտանք, յոտէքը, կլասները ժուռ էկանք. այստեղ ալ յիստակ թամուզ, հէչ զալայելու բան չգտանք։ Բաթումին մէջ ժուռ էկանք տէյմօր մթանը թօնը շղշալով թափէր կը. անպէս թռչանք, անպէս թըռչանք, օր հեռի լսողաց, թռչած մուկ դառանք։ Փախանք Բաթումից, մտանք Թիֆլիզ։ Աստեղ անքան անաջ զալայչիներ կան. օր ես անոնց քովը՝ չորս թագաւորով չորս տղով փաս։ Շատ ժուռ էկանք. շատ բաներ տեսանք, շատ ժամեր մտանք, շաբաթ օրն ալ գնացինք հայոց վանքը տեսնելու։ Վանքի դուռը փակ էր։ Ադին ժամկոչ, անդին ժամկոչ փնտռեցինք, հարցուցինք, չգտանք, ժամկոչը դառաւ սև աղէս, յոտով գլխով կորաւ։ Զարասղ ես գնացի Եփրեմ սրբազանին խնդրելու, դուռը ծեծեցի. խղմաթքեարը բացեց ու հերսոտ հարցրեց.

—Ո՞վ ես, ոբտեղացի ես, ինչ գուզես. ինչի դուռը կըծեծես, զանգը չես տեսնի։

—Ես դարսեցի զալայչի Մարգարն եմ, սրբազանին գուզիմ, գործ ունիմ։

—Ի՞նչ գործ ունիս։

—Սրբազանի յաջը առանց յաջհամբուրի պիտի համբուրեմ, ու բան պիտի ըսեմ։

—Լաւ, քիչ սպասէ, սրբազանի քովը կընիկ կայ, թող պրծնէն, կնիկը դուրս գայ, յետև յիմաց կըտամ, դու գնայ։

—Զանմ ատ կնիկը բալքի շատ գուշանայ, ես էվատի եմ. ինձի բաքլային կը վարժապետները։

—Էվադի ես՝ գնայ, ես չեմ կարող ներս մտնի, սրբազանը բարկանայ կը։

Զարէն ինչ, բաքլայեցինք խէլիմ, մէ մալ մարդոց կըմնան սոսկ-անօգուտ զինորութիւնն՝ босяк-ութիւնը. հէնց այժմ իսկ միլիոնաւոր շնորհալի մարդիկ լիքն են ночлежка-ները նօթի շան վիճակի մէջ, սպասելով իրանց պատուհաս կեանքի վերջակէտին։

Эхъ! юбки, юбки!..

Զհանմանմը, գոնէ այդ պաշտօնաւոր ու հերոս կանայք, փոխանակ դաղտնի ընկերիկների թիւը բազմացնելու փողոցներում կամ подъѣзд-ների առաջ, յանուն մարդասիրութեան, առնէին ու պահէին մի-մի բաղդաղուրկ բեխ-մօրուքաւորի — (ինչպէս այդ սովորաբար արել են և դեռ անում են այր-մարդիկ կանանց վերաբերմամբ) տուն աւիլելու, լուացք ու կարկատան անելու, երեխայ մեծացնելու (այլ ոչ ծնելու) և այլն...

Բայց այդ էլ չեն անում։

Դատեցէք, դատեցէք ուրեմն թէ ինչ կանէին եւանները, հասնելով իրանց նանիր ցանկութեան կատարելութեանը...

Ո՛չ. այդ անկարելի է. ես թոյլ չեմ տալ...

Ես կոչ եմ անում Անգլիայի բոլոր յամառ տեսնինք, սրբազանը ինչայ հեռ դուս կաւ կնկան համբից և ինձի հարցուց.

—Ի՞նչ ես կամենում։

—Սրբազան, ռուսաց վարժապետները յաշկերտների հետ վանքի դուռը բաքլային կը, խնդրիմ կը օր դուռը բանաս ժամը տեսնին համ էլ թանգարանը գուզին տեսնել։

—Առաջին մենք թանգարանի մէջ տեսնելու բան չունինք, մէկ Եղիշէմ կայ, մէ Ղազար Փարպեցիմ, մէյմալ Երվ. Լալայեանցի գրքերը։ Այնտեղ ինչ կայ օր ինչ տեսնիք։ Վանքն էլ եթէ ուզում են տեսնել, թող ժամհարին դանին, այս իմ գործը չէ։ Ասպէս քեասա ջուղապ տուեց սրբազանը ու ռադ էրից ինձի գլխից։ Այլազգիների ժամերը բացին. սիրով ընդունեցին. համ հայոց ժամը մեզի համար փակ մնաց։ Բոռ փոշման թողինք, հեռացանք։

Դալայչի Մարգար

ՄՏՔԵՐ ԵՒ ԱՖՕՐԻԶՄՆԵՐ

(Վ. Շէքսպիրից)

—

Երիտասարդների սէրը ոչ թէ սրտերումն է, այլ աչքերում միայն։

—

Սէրը՝ սրտի քաղցն է, իսկ քաղցը՝ ստամոքսի սէրը։

—

Հոգեկան տանջանքների դէմ միայն երկու դեղ կայ. յոյսն ու համբերութիւնը։

—

հարկէ դուրս է գալիս խիստ նորմալ մի մարդ։

Այնուհետև գործին անտեղեակ, բամբասաւէր գիւղացիք բերանի մաստակ են դարձնում Գիքեօրի բժշկի մօտ գնալու համբաւը։ Մէկն ասում է թէ—«Զէ, էդ մարդի բէյնրմը ճիճու կըլի. շաշութինը մի հրօպէի բանա...»

Միւսը.—«Ո՞վ ա գիդըմ, բալի հէյ հաստատ շաշ ա, մենք բէխաբար...»

Երրորդը.—«Ա՛յ տա, ես նոր եմ բրաւուրդ անըմ, դրա ժաժմունքը շաշալարի ա...»

Չորրորդը—«Զէ, չէ մխելի ունի...»

Այսպիսի քչփչոցներ շարունակ Գիքեօրի ականջն ընկնելով, կարճ ժամանակից յետոյ իրօք խելացնորուեց, կորցրեց իր ունեցած-չունեցածը ու հիմա էլ ընկած է գժանոցում։

Հապա քաղաքներում—

Այնտեղ էլ կանայք խլել են և խլում են այր-մարդկանցից ապրուստի բոլոր, բոլոր միջոցները, այնպէս որ շուտով երևի այր-մարդոց կըմնան սոսկ-անօգուտ զինորութիւնն՝ босяк-ութիւնը. հէնց այժմ իսկ միլիոնաւոր շնորհալի մարդիկ լիքն են ночлежка-ները նօթի շան վիճակի մէջ, սպասելով իրանց պատուհաս կեանքի վերջակէտին։

Эхъ! юбки, юбки!..

Զհանմանմը, գոնէ այդ պաշտօնաւոր ու հերոս կանայք, փոխանակ դաղտնի ընկերիկների թիւը բազմացնելու փողոցներում կամ подъѣзд-ների առաջ, յանուն մարդասիրութեան, առնէին ու պահէին մի-մի բաղդաղուրկ բեխ-մօրուքաւորի — (ինչպէս այդ սովորաբար արել են և դեռ անում են այր-մարդիկ կանանց վերաբերմամբ) տուն աւիլելու, լուացք ու կարկատան անելու, երեխայ մեծացնելու (այլ ոչ ծնելու) և այլն...

Բայց այդ էլ չեն անում։

Դատեցէք, դատեցէք ուրեմն թէ ինչ կանէին եւանները, հասնելով իրանց նանիր ցանկութեան կատարելութեանը...

Ո՛չ. այդ անկարելի է. ես թոյլ չեմ տալ...

Ես կոչ եմ անում Անգլիայի բոլոր յամառ Սուֆֆրաժուհիներին, Գերմանիայի և Աւստրիայի հռետոր ուհիներին, Կօպէնհագենի կանանց շարժման պարագլուխ տիկնացեալ օրիորդների և մանաւանդ Կովկասի բոլոր մաստակ ծամող Մաթօներին՝ դեռու կենալ իրանց կորստաբեր մաքերից ու չայլասեռուել։

Ի՞նչ էմանսիպացիա, ինչ ակացիա...

Օ՜ կանայք! ահա ասում եմ ձեզ - գնացէք, նստեցէք ձեր տներում ու ապրեցէք, ինչպէս ապրել էք, եթէ ոչ, Աստուած է վըկայ, ամբողջ այր-մարդկութիւնը միացած ոյժով իզաղրել կըհրատարակէ և այդ կերպ ձեզ կըլացեցնէ, անշունչ մանէկենները դարձնելով...

Մարշ՜, մարշ՜, բրիւկ հագնելը ձեր գործը չէ, այն պիտի մաքուր պահել, բրիւկը հօ չի ծածկուում զոգնոցով կամ շրջազգեստով։

Ամօթ է, վերջացրէք...

Ես համաձայն չեմ։

Մարիկ

—Ինչպէս է ձեր կնոջ առողջութիւնը։
—Շնորհակալ եմ։ Նա արդէն մեռաւ։

—Դու տեսնում ես այս գլխարկը։
—Այդ գլխարկը յիսուն մանէթանոց պատուհաս պիտ թափի գլխիս։
—Այդ պատուհասը, յամենայն դէպս քո գլխին չի թափուիլ—այլ իմ գլխին, դու ինչ չի ես վճռանում։

ԲԱԳԻԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հաջի Սրդին Զէյնալ Թաղիևը սևացնում է՝ ումը ուզում է և սպիտակացնում՝ ում որ ցանկանում է։

Ազնուութիւնը գեղեցկութեան լաւագոյն ընկերն է։

—

Որքա՜ն դժւար է կնոջ համար՝ գաղտնիք պահելը։

—

Աղջկայ ամբողջ հարստութիւնը՝ նրա պատիւնէ. նա ամեն տեսակ ժառանգութիւնից էլ թանկ է։

—

Եթէ երկիրը լցւանար կանանց արցունքից՝ նրանց արցունքի ամեն մի կաթիլից մի-մի կոկորդիլոս կըծնւէր։

—

Կանայք—պատկերներ են՝ տնից դուրս, զանգեր՝ ննջարաններում և ընդունարաններում, վայրի կատուներ՝ խոհանոցներում, սրբեր՝ երբ իրանք են վիրաւորում, դևեր՝ երբ իրանց ես վիրաւորում, ծաղրածուհիներ՝ տնտեսութեան մէջ, և տանտիկիններ... անկողնում։

—

Կանացի հակումը քմահաճութիւններից, տարօրինակ ցանկութիւններից դէնը չի անցնում։

Գ. Բաքուրեան

Բ Ա Դ...

«Բաղը լթռաւ հետքից բմբուլներ լթողեց եւ այդ բմբուլներից փխս մարդը քիչ մնաց որ խեղդւէր»։

V

(Ալ. Քալանթարի բնակարանը՝ մտնում է սև Սանդրօն և դեռ պրոշտի չարած, գըլխարկը համարեա վայր ձգում։)

—Քալանթար, շնորհաւո՛ր, բայց այդ ի՞նչպէս եղաւ, էդ էր մեզ պակաս—յիսուն վաթսուն հազար որ նրանք ունենան, մենք էլ ի՞նչ կարող ենք անել. կորանք։

—Ո՞վքեր, ի՞նչ յիսուն-վաթսուն հազար, ես բան չեմ հասկանում։

—Համբարձումը յիսուն թէ վաթսուն հազար է նւիրել «Հորիզոնի» հրատարակութեան։

—Ի՞նչ, ի՞նչ. ի՞նչ. Համբարձո՞՞ւմը—ես նրան ցոյց կըտամ—թողէք էս րոպէիս—ես մի գնամ թողէք, թողէք—(և թռա՜ւ, թռա՜ւ Քալանթարը թռաւ, խմբագրատուն մտաւ, տեսաւ այնտեղ են Համբարձումը, և Սարգիս Ես.ը—և Արտիմուսը և միւս մասը, ուսը և գուսը. Քալանթարը զսպւած։

—Պասլուշի Համբարձում, դու չես ամաչում, ի՞նչեր ես խօսում, ի՞նչպէս պայքարում և յանկարծփողը, черт знает, որտեղի՞ց, ո՞ր քարի տակից գտնում ես ու բերում ու տալիս ես ո՛չ թէ մեր ծառայողներին, ոչ թէ մեր թերթի ապահովութեան, այլ մի ինչ որ, մի ինչ որ «Հորիզոնի», ո՜հ դաւաճանութիւն, ա՜հ դաւաճանութիւն—Արծրունին չի կարող այլևս մնալ այնտեղ, գերեզմանի տակ, տեսնում ես նա արդէն կանգնել է այստեղ, գլխավերևը։

Համբարձում.—Ես բոլորովին ոչինչ չեմ հասկանում, Ալէքսանդր, միթէ պասկս այդչափ շատ ես ուտում, որ նոյնիսկ չես հասկանում թէ ի՞նչ ես խօսում, ես յիսուն...

Քալանթար.—Այո՛ դու և ոչ ես—ես գիտեմ, գիտեմ, բոլորը գիտեմ, դուք զուր էք կարծում թէ ես ոչինչ չգիտեմ, դուք դաւաճանում էք գաղափարների, Արծրունու...

Համբարձում.—Արծրունու գաղափարներին ես չեմ դաւաճանում, դուք էք դաւաճանում, ընդհակառակը—ես չեմ հասկանում։

Քալանթար.—Իսկ յիսուն հազար տալիս ես «Հորիզոնին»... չէ մի «Սուրհանդակին» էլ, «Խաթաբալին» էլ, «Լոյսին» էլ «Հովիտին» էլ...

(Ներս է մտնում վազէվազ և քրտնաթոր սև Սանդրօն)։

Սև Սանդրօ.—Պ. Քալանթար էս Համբարձումը խօ չէ, էն միւս Համբարձումը...

Քալանթար.—Ո՞ր Համբարձումը—ի՞նչեր ես ասում։

Սև Սանդրօ.—Մելիքեանը, Համբարձում Մելիքեանը, նա՛ է յիսուն հազարը տւել ու խոստացել։

Համբ. Առաքել.—Ո՞ւմը, ո՜ւմ է տւել, կտակը երբ է գրել։

Սև Սանդրօ.—Կտակ չի գրել, վերցրել է ու դէմուդէմ Յովհաննէս Թումանեանին Լէօյին, Աղայեանին և Շիրվանզադէին յիսուն թէ վաթսուն հազար բուբլի հենց երեկ չէ առաջի գիշերն տւել է։

Համբ. Առաքել. Քալանթար (միասին).—Ի՞նչպէս թէ տւել է, ի՞նչու է տւել։

Սև Սանդրօ.—Թերթի հրատարակութիւնը ապահովելու։

Համբ. Առաքելեան.—Դա սուտ է, սուտ է Համբարձումը ի՞նչ ունի որ, ինքն է ուրիշների դռները մաշում, երեք մանէթի համար ձեռքը միշտ մեկնում։

Քալանթար.—Պասլուշի Համբարձում, ես չեմ հաւատում։

Համբ. Առաքելեան.—Ի՞նչի պիտ հաւատաս, անխելք խօ չես որ...

Քալանթար.—Պասլուշայ, Համբարձում, բայց եթէ ճիշտ լինի։

Համբ. Առաքել.—Ի՞նչպէս կարող է ճիշտ լինել, երբ Համբարձում Մելիքեանը յիսուն հազարի փող չէ, խելք էլ չունի [illegible], ի՞նչ է։

Քալանթար. — Պոսլուշայ Համբարձում բայց եթէ ճիշտ լինի։

Համբ. Առաքել.—Եթէ ճիշտ լինի, ես կըբարիշեմ նրանց հետ, կերթամ և կըգրեմ ես «Հորիզոնում»։

Քալանթար.—Իսկ Արծրունին, իսկ Արծրունին։

Համբ. Առաքել.—Ի՞նչ Արծրունին, նա էլ խօ ոչինչ չի տեսնում, ոչինչ չէ լսում։

Քալանթար.—Ո՜ւյ,վայ մեզ—Համբարձում, պասլուշայի Համբարձում։

Համբ. Առաքել.—Լէօն գնաց, Արծրունին ի՞նչ արեց, էն մէկէլները գնացին Արծրունին ինչ արեց։—Բայց չեմ հաւատում։

Սև Սանդրօն.—Աստւած գիդենայ, ճիշտ եմ ասում։

Համբ. Առաքել. — Ոչ հաւատամ զսուտ Քրիստոս, դա բաղ է, սաղ է, փետրած վարիկ է, Մելիքեանը փող ունենայ, ինքը կուտի, էլ ինչի՞ է նրանց տալի. հանգստացիր Ալէքսանդր։

Քալանթար.—Որ չեմ կարող -- գրեցէք այս րոպէիս, որ այդ բանը սուտ է, գրեցէք տպեցէք, թերթի մէջ տպեցէք և այնպէս կըհաւատամ։

(Ամենքը խորհին երկուղածութեամբ մօտեցան գլուխ ուրին և դուրս ծլկւեցին)։—Միւս օրը «Մշակի» մէջ լուր տպւեց, որ «Հորիզոնի» ստացած 50—60 հազարը բաղ է և ընկած ակցիաների բարձրացման զուր ջանքեր...»։

(Կըշարունակւի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

ԽԱԹԱԲԱԼԱ

կոմպլէկտներ

ՇՔԵՂ ԿԱԶՄՈՎ

1906 թ. . . . . . . 5 ր.
1907 թ. . . . . . . 7 ր.
1908 թ. . . . . . . 7 ր.
1909 թ. . . . . . . 7 ր.
1910 թ. . . . . . . 7 ր.

Հին համարները հատով Թիֆլիսում 10 կոպ., Թիֆլիսից դուրս 12 .։ Դիմել՝ «Խաթաբալա»-ի գրասենեակին։

ՅԱՐՄԱՆԵՎԱՆ ՇՈՇԱՆՈՒՄՈՎՅԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԲԷՆ-ՀՈՒՐ

ՎԷՊ

Քրիստոնէութեան առաջին օրերից

Ֆրանս. թարգմ. Տիրայր վարդապետ

Հրատարակութիւն «Գուտենբերգ» գրավաճառանոցի

Գինն է փոստի ծախքով 1 ռուբլի

Դիմել՝ Тифлисъ, книжн. магаз. «Гуттенбергъ» Г. И. Галустяну.

1911 թ. գրացուցակը ուղարկուում է Զ Ր Ի 1—2

Տպագրութեան համար պատրաստում եմ հետեւեալ նիւթերը։

ԻՆՔՆՈՒՐՈՑՆ

1. «Մակար Եկմալեան», ակնարկ նրա երաժշտական գործունէութեան մասին (մի մասը տպագրուած է «Սուրհանդակի 264 և 265 համարներում, 1911 թ.)։

2. «Ուղղագրական բառաշարք», հայ. ծխ. ուսումնարանների I—V պատր. դասարանների համար (տպագրական թերթերի վրայ)։

3. «Նոր դպրոց», Լէնց-ի (տպ. «Սուրհանդակի» 252 և 254 համարներում, 1911 թ.)։

4. «Սեռային դաստիարակութեան մասին» (տպ. Նոր-Նախիջ. «Լոյս»-ի 2 և 4 համարներում, 1911 թ.)։

5. «Սաֆիր», ընտիր մտքեր 400 հատ։

6. «Дорого стоитъ», պատմուածք Լ. Ն. Տոլստոյի։

7. «Франсуаза», պատմ. Լ. Ն. Տոլստոյի։

—

Հրատարակել ցանկացողները խնդրեմ դիմեն ինձ իրենց պայմաններով։

Իմ հասցէն.— Ставрополь—губернскій; Хачатуру Теръ-Енокянцу (Армянское училище).

ԽՍՀ. ՏԷՐ-ԵՆՕՔԵԱՆ

3. Գ. Տպագրութեան համար պատրաստած, վերջացրած իմ՝ «Բացատրութիւններ մօտ 3000 օտարազգի բառերի, որոնք գործածւում են մեր մամուլի մէջ, աշխատութիւնս, որ թարգմանել էի մի քանի տեսակ էնցիկլոպեդիական բառարաններից՝ 1907 թ-ի աշնանը կորցրի Ախալցխայում։ Գրտնոնները անչափ պարտաւորեցրած կըլիներն ինձ՝ երկար տարիների այդ աշխատութիւնը ինձ վերադարձնելով։

10—3 Խ. Տ.-Ե.

ԲԺԻՇԿ

ՓԱՆՕ ՄԱՆԴԻՆԵԱՆ

Մասնագիտութիւն ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ։

Ընդունում է հիւանդներ իր սեփ. տանը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28.

00—99

Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառւում է

ՆԱՐ-ԴՈՍ

ՊԱՅՔԱՐ

ՎԷՊ

Գինն է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Սուրհանդակ»-ի խմբագրատանը, ուր և դիմում են գումարով գնողները։

ՐԷՍՏՈՐԱՆ-ՃԱՇԱՐԱՆ

ԴԻԼԻ ՊՈՒՖԶՈՒՐ

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ Թամամշեան քարւանսարայի տակ

ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ

— Եւրոպական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կաբինետ-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ

25—1

„ԲԺԻՇԿ“ ամսաթերթ

Բժշկական և առողջապահական ամենէն ուժան, ամենէն օգտակար ու իր տեսակին մէջ միակ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ հանդէսը. արժանի ընտանեկան յարկերէ ներս մուտք գտնելով ամենուն տան ԲԺԻՇԿՆ ըլլալու։

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Թուրքիա	20 ղրուշ
Արտասահման	5 ֆր.
Ամերիկա	1 տալէր

Ռուսաստան և Պարսկաստան 2 ռուբլի.

Հետաքրքիրներուն համար թիւ մը ծրի կըղարկուի։

Հասցէ՝ Dr. Bahan Chazarian, Trapisonde 20—5

Типографія „ГЕРМЕСЪ“ Мух. 13. Ժամանակաւոր Խմբագիր Ս. ՄՈՒԲԱՑԱՋԵԱՆ

Ի ՄԻՋԻ ԱՑԼՈՑ...

—Մայրիկ դու ոչինչ չես նկատում կամ ոչ մի բան չես զգում։
—Ի՞նչ պիտ զգամ և կամ նկատեմ...
—Արդեսք մեծ մայր չես դառնում—կամ չես ուզում դառնալ, միթէ ժամանակ չէ, գարունն էլ եկաւ...

ეროვნული ბიბლიოთეკა